Ինչպե՞ս դառնալ IDBank-ի հաճախորդ

(օտարերկրյա անձնագրով անհատ ձեռնարկատերերի և օտարերկրյա հիմնադիր կամ տնօրեն ունեցող իրավաբանական անձանց համար)

1. *Ներբեռնեք KYC ձևաթուղթը հղումով. (Սկանավորեք QR- ը)*
2. *Լրացրեք էլեկտրոնային ձևաթուղթը, ստորագրեք և սկանավորեք այն:*
   Կարևոր նշում. *Հարգելի հաճախորդ, խնդրում ենք հաշվի առնել, որ KYC թերթիկի բոլոր դաշտերը ենթակա են պարտադիր լրացման: Խնդրում ենք տրամադրել հնարավորինս մանրամասն տեղեկատվություն:*
3. Պահանջվում են հետևյալ փաստաթղթերի scan տարբերակները.
   1) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ (որի բոլոր հիմնադիրները հանդիսանում են ֆիզիկական անձինք, իսկ նրանցից առնվազն մեկը՝ օտարերկրյա քաղաքացի ֆիզիկական անձ) և օտարերկրյա քաղաքացի հանդիսացող անհատ ձեռնարկատեր.
      - ՀՀ պետական ռեգիստրից քաղվածք
      - Կանոնադրություն (միայն ԻԱ համար),
      - Տնօրենի, հիմնադիր(ների) և իրական շահառուների բոլոր անձնագրերը՝ լուսանկարի և բնակության հասցեի էջերով: Հիմնադրի, իրական շահառուի կացության քարտը՝ առկայության դեպքում: ԱՁ դեպքում՝ սոցիալական քարտ (Հանրային ծառայությունների համարանիշ):
   2) ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ (որի հիմնադիրներից առնվազն մեկը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ իրավաբանական անձ կամ ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ). ի լրում կետ վերոնշյալ 1)-ում նշված փաստաթղթերի՝ իրավաբանական անձ հիմնադրի մասով.
      - բոլոր իրավաբանական անձ հիմնադիրների հիմնադիր փաստաթղթերը՝ համաձայն ռեզիդենտության/գրանցման երկրի օրենսդրության, ինչպես նաև նրանց սեփականատերերի անձնագրերը,
      - ֆիզիկական անձ իրական շահառուների անձնագրերը:
   3) ՀՀ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձ. հիմնադիր փաստաթղթերը՝ համաձայն ռեզիդենտության/գրանցման երկրի օրենսդրության, ինչպես նաև նրանց սեփականատերերի անձնագրերը, ֆիզիկական անձ իրական շահառուների անձնագրերը:
   4) **Վերոնշյալ բոլոր հաճախորդների դեպքում.**
      ✓ Գործընկերների հետ կնքված պայմանագրեր, այդ թվում գործող և նոր կնքվելիք պայմանագրեր, առկայության դեպքում՝ նախկինում ծավալված գործունեության ընթացքում կնքված պայմանագրեր:
      ✓ Գործունեության իրականացման տարածքի վարձակալության պայմանագրեր, սեփականության վկայական և այլն:
      ✓ Հարկային հաշվետվություններ և բանկային հաշիվների քաղվածքներ՝ վերջին 1 տարվա համար:
4. Պահանջվող բոլոր փաստաթղթերը՝ .pdf ձևաչափով, ինչպես նաև կոնտակտային անձի տվյալները ուղարկեք Բանկի հետևյալ էլ. հասցեին՝ NonresidentCorp@IDBank.am
5. Նամակի վերնագրում նշեք՝
   «Հաշվի/քարտի բացում (կազմակերպության անվանումը, Հարկ վճարողի հաշվառման համար)». *օրինակ՝ «Հաշվի բացում «ԱԱԱ ՍՊԸ» 1234567»*
6. Փաստաթղթերի փաթեթը ուղարկելուց հետո դուք կստանաք ծանուցում, որ Բանկը ստացել է Ձեր հայտը և վերջինս գտնվում է դիտարկման փուլում: ***Հավելյալ փաստաթղթերի/ տվյալների անհրաժեշտության դեպքում Բանկի աշխատակիցը կապ կհաստատի հայտում նշված կոնտակտային անձի հետ:***
7. Հայտը ամբողջական լինելու պարագայում այն Բանկի կողմից կուսումնասիրվի 7 բանկային օրվա ընթացքում:
8. Հայտի հաստատման կամ մերժման վերաբերյալ Բանկը կտեղեկացնի պատասխան նամակի միջոցով:
   Կարևոր նշում. *Հարգելի հաճախորդ, Խնդրում ենք նկատի ունենալ, որ փոխանցումներ իրականացնելիս հնարավոր է Բանկի հետ լրացուցիչ համաձայնության և փաստաթղթերի ներկայացման անհրաժեշտություն:*
9. Հայտի հաստատման դեպքում հարկավոր է մոտենալ մասնաճյուղ:
10. Հերթերից խուսափելու համար կարող եք ներբեռնեք Earlyone հավելվածը Google Play-ում կամ App Store-ում և առցանց գրանցել Ձեր այցը IDBank-ի Ձեր նախընտրած մասնաճյուղ:
11. Բանկի Մասնաճյուղերը կարող եք տեսնել հետևյալ հղումով: Իսկ Կորպորատիվ հաճախորդների սպասարկման հարմարության համար Բանկի Գլխամասային գրասենյակում՝ Վարդանանց 13 հասցեով, գործում է նաև առանձնացված սպասարկման սրահ:
12. Բանկի աշխատակիցը կօգնի նաև ներբեռնել **IDBusiness mobile** բջջային հավելվածը և առցանց սպասարկման «Բանկ հաճախորդ» համակարգը, որոնց միջոցով կարող եք առանց Բանկ այցելելու կառավարել Ձեր հաշիվները, իրականացնել գործարքներ, ինչպես նաև օգտվել թվային հարթակի ընձեռած բազմաթիվ այլ հնարավորություններից:

(Սկանավորեք QR- ը)